**«Մխիթար Սեբաստացի» կրթահամալիր**
**Ստեղծողի մոբիլ դպրոց**
**2017-2018 ուսումնական տարի**

**1-3-րդ դասարաններ. «Իմացումի հրճվանք»**
**Ուսումնական պլան**

| Բովանդակություն | Շաբաթական ժամաքանակը | | |
|---|---|---|---|
| | I | II | III |
| **Ընդհանուր բաղկացուցիչ** | | | |
| Մայրենի | 5 | 5 | 5 |
| Անգլերեն | 2 | 2 | 2 |
| Ռուսերեն | 2 | 2 | 2 |
| Մաթեմատիկա | 4 | 4 | 4 |
| Ես և շրջակա աշխարհ | 2 | 2 | 2 |
| Երաժշտություն, պար | 2 | 2 | 2 |
| Կերպարվեստ, տեխնոլոգիա | 2 | 2 | 2 |
| Ֆիզկուլտուրա | 3 | 3 | 3 |
| Շախմատ և տրամաբանական այլ խաղեր | 1 | 1 | 1 |
| **Սովորողի ընտրությամբ բաղկացուցիչ** | | | |
| Սովորողի ընտրած գործունեություն | 2 | 2 | 2 |
| Ընդամենը | 25 | 25 | 25 |
| Տնային ուսումնական աշխատանք | | | |
| Լրացուցիչ կրթություն | | | |

**Ուսումնական պլանի պարզաբանումներ**

1. Ուսումնական պլանը «Ստեղծողի մոբիլ դպրոց» հեղինակային (պետական այլընտրանքային) կրթական ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր) սովորողի ուսումնառության պայմանագրի հավելվածն է:
   Բոլոր ծնողների հետ նախքան պայմանագրի կնքում ներկայացվել է ուսումնական պլանը, ուղարկվել այլ փաստաթղթերի հետ ծնողի էլ. հասցեին:
2. Կրթական ծրագիր ընդունվում է այն սովորողը, որի ծնողն (օրինական ներկայացուցիչը) ընտրում է ծրագիրը և սահմանված կարգով պայմանագիր կնքում ուսումնառության մասին.

Սովորողների ծնողների հետ կնքվել է ուսումնառության պայմանագիր: Պամանագրի հաստատված և սքան արված օրինակն ուղարկվել է սովորողի էլ. Հասցեին և տեղադրվել Հարավային դպրոցի Sky-drive–ում:

- մինչև 2017թ. դեկտեմբերի 31-ը 6 տարեկան դարձող երեխան,
- համապատասխան դասարանի սովորողը (կամ սովորողի զարգացման մակարդակին, առանձնահատկություններին ու պատրաստվածության աստիճանին համապատասխան դասարան՝ սահմանված կարգով):

Ընդունելությունը կատարվում է «Մուտք կրթահամալիր» ուսումնական ճամբարով:

Նոր ընդունված բոլոր սովորողները մասնակցել են մուտքի ճամբարին, 5 տարեկանները և 1-ին դասարանցիները մինչև սեպտեմբեր մասնակցել են է «Մուտք կրթահամալիր» ուսումնական ճամբարին, իսկ դրանից հետո ընդունված սովորողները երկարացված օրվա ճամբարին են մասնակցել նոր ընդունվել:

3. Դասարանում սովորողների թիվը 20-25 է: Սովորողի ընտրությամբ գործունեությունը կազմակերպվում է 12-22 հոգիանոց խմբերով:

Դասարաններ, ընտրությամբ գործունեության խմբերը կամվել են այս կետի համաձայն:

4. Ուսումնական պլանը կազմված է ընդհանուր և սովորողի ընտրությամբ բաղկացուցիչներից:
5. Ուսումնական պլանի պարզաբանումներում նշված կարգերը ուսումնական պլանի հավելվածն են: Դրանք դպրոցի ղեկավարի ներկայացմամբ հաստատում է կրթահամալիրի տնօրենը:
6. Ուսումնական տարին կազմակերպվում է կրթահամալիրի (դպրոցի, դասարանի, դասընթացի, սովորողի ընտրությամբ գործունեության, լրացուցիչ կրթության, երկարացված օրվա ծրագրի, ուսումնական նախագծերի) ուսումնական օրացույցով: Դրանցով որոշվում են ուսումնական պարապմունքները և ճամբարները, ստուգատեսները, ծեսերը, տոները, ուսումնական այլ հավաքները:
7. Ուսումնական տարին սկսվում է 2017թ. օգոստոսի 30-ին, կազմված է չորս շրջանից՝
   - առաջին՝ 2017թ. օգոստոսի 30-2018թ. հունվարի 8,
   - երկրորդ՝ հունվարի 9-հունվարի 29,
   - երրորդ՝ հունվարի 30-մայիսի 28,
   - չորրորդ՝ մայիսի 29-հունիսի 15:
8. Ուսումնական շաբաթը 5-օրյա է: Ծնողի համաձայնությամբ շաբաթ օրերին կարող են կազմակերպվել լրացուցիչ կրթության պարապմունքներ, հայրենագիտական, ուսումնական ճամփորդություններ, ուսումնա-հասարակական նախագծեր:
9. 2018թ. հունվարի 9-ից 26-ը, մայիսի 29-ից հունիսի 8-ը կրթական ծրագիրը, սահմանված կարգով, կազմակերպվում է նախագծային ուսուցման ճամբարում:
10. 2017թ. սեպտեմբերի 4-8-ը, նոյեմբերի 6-10-ը, 2018թ. ապրիլի 2-6-ը, մայիսի 14-18-ը կրթական ծրագիրը կազմակերպվում է նախագծային ուսուցման ստուգատեսով:

Դասավանդողների բլոգում, դպրոցի ենթակայքում հրապարակվում է նախագծային ուսուցման նախագծերը

11. 2017թ. հոկտեմբերի 30-ից նոյեմբերի 5-ը, 2017թ. դեկտեմբերի 25-ից մինչև 2018թ. հունվարի 7-ը, մարտի 26-ից ապրիլի 1-ը, հունիսի 18-ից օգոստոսի 29-ը սովորողին տրվում է արձակուրդ: Այդ շրջաններում ուսուցումը, որպես լրացուցիչ կրթություն, կազմակերպվում է «Ուսումնական արձակուրդ» նախագծով:

    Դասավանդողների բլոգում, դպրոցի ենթակայքում հրապարակվում է «Ուսումնական արձակուրդ» նախագծերը:

12. Ուսումնական պլանի դասընթացները միավորվում են «Իմացումի հրճվանք» ծրագրում, որը ղեկավարում է դասվարը:
13. Ուսուցումը կազմակերպվում է ուսուցողական թվային միջոցներ կիրառելով: Դասավանդողը և սովորողը դպրոց են գալիս սահմանված տեխնիկական պայմաններին բավարարող անհատական նեթբուք-նոթբուք-պլանշետով, տանն ունեն համացանց: Ծրագիրը դպրոցում ապահովում է անլար համացանցից, համակարգչից, ձայնագրիչից, ֆոտոխցիկից ուսումնական նպատակներով անարգել օգտվելու հնարավորություն:

Հարավային դպրոցում բոլո սովորողներն ու դասավանդողներն ունեն իրենց անհատական գործիքները՝ բացառությամբ այն սովորողների ովքեր տանը երեք երեխա են, դպրոց են գալիս դրանցով: Համացանցի հետ կապված այս տարի գրեթե խնդիրենէր չեն առաջացել:Բոլոր կաբինետներում կա համակարգիչ: Յուրաքնաչյուր ուսուցրի հեռախոս ունի իր նկարահանման և ձայնագրան սարքը և առանձին ֆոտոխցիկի և ձայնագրիչի կարիք չի առաջանում:
Դպրոցն ունի իր անհատական ֆոտոխցիկն ու ձայնագրիչը:

14. Մեդիագրադարանը, դպրոցի գրադարանը, դասավանդողների բլոգները սովորողին տանը, դպրոցում ապահովում են անհրաժեշտ ուսումնական էլեկտրոնային և տպագիր նյութերով, միջոցներով:
15. Ուսուցումը կազմակերպվում է ուսումնական պարապմունքների տարբեր ձևերի, ուսումնական նախագծերի մշակման և իրականացման, ուսումնական ճամփորդությունների, ճամբարների, ստուգատեսների միջոցով:

Ուսուցումը կազմակերպվում է տվյալ կետին համապատասխան:

16. Ուսումնական պարապմունքները սահմանված կարգով կազմակերպվում են հիգիենիկ միջավայրում, այդ թվում՝ բացօթյա:

Դասարանները ժամանակին մաքրելը, օդափոխելը կաբինետի ղեկավարի և կցված դասարանի սովորողների պարտադիր աշխատանքն է: Եղանակի համապատասխանպայմանների դեպքում ուսուցումը կազմակերպու է նաև բացօթյա պարապմունքների միջոցով:

17. Սովորողների կարողություններին և պահանջմունքներին համապատասխան՝ կրթական ծրագիրն իրականացվում է առկա, հեռավար ձևերով:

    Այս ուսունական տարում հեռավար ուսուցումը կազմակեպրող սովորողներ չեն եղել Հարավային դպրոցում:

18. Սովորողի ուսումնական առաջադիմությունը, գործունեության արդյունքները, ճամբարներին, ճամփորդություններին, ստուգատեսներին, ֆլեշմոբներին մասնակցությունը, սովորողի մասին անհրաժեշտ այլ տեղեկություններ սահմանված կարգով էլեկտրոնային գրանցում են ստանում րստուսուցման շրջանների:

Հարավային դպրոցի էլ. Մատենավարության մեջ գրանցվում էհամապատասխան ցուցանիշները:

19. Ուսումնական գործունեության ընթացքում սովորողները վարժվում են թվային տեխնիկան՝ համակարգիչ, ֆոտոխցիկ, ձայնագրիչ, անվտանգ, խնամքով օգտագործելուն: Յուրացնում են նկարչական ծրագիր, սովորում են իրենց կարիքների համար օգտագործել տեքստային որևէ խմբագիր: Կարողանում են համացանցում գտնել իրենց հետաքրքրող ֆիլմեր, խաղեր: Տեխնիկան օգտագործում են կարդալ և գրել սովորելու համար:

Սովորողներն աշխատում են, սովորում թվարկված կետերին համապատասխան:

20. «Իմացումի հրճվանք» ծրագիրը ներառում է շրջապատի կամ նյութական միջավայրի բարել ավման նախագծեր:
21. Հիգիենիկ պահանջների պահպանումը, ուսումնական ներքին և արտաքին տարածքների և գույքի խնամքը նաև սովորողի ինքնուրույնության և ինքնասպասարկման արդյունք են:

Յուրաքանչյուր օր տվյալ ակինետինկցված սովորողները մաքրում են դասարանը, խնամում կաբինետի բույսերը:
Տվյալ օրվա պատասխանատու սովորողներն աշխատում ենդպրոցի բակում՝ կատարում պարտիզապուրակային, այգեգործական աշխատանքներ:

22. Դասավանդողի բլոգին, դպրոցի, կրթահամալիրի կայքերին հետևելը և դրանց աշխատանքին մասնակցելը, էլեկտրոնային անձնական հասցեն վարելը սովորողի ուսումնական աշխատանքն է: Խրախուսվում է սովորողի անձնական ուսումնական բլոգի ստեղծումը և վարումը:

Սովորողները և ծնողներն ունեն իրենց անհատակ էլ.հասցեն, յուրաքանչյուր օր օգտվուն ն դրանից, հետևում դպրոցի կայքին,դասվարի և դասավանդող ուսուցիչների բլոգներին: 3-րդ դասարանի սովորողներն ունեն իրենց անհատական բլոգները:

23. Ծրագրի ամենօրյա 15 րոպե տևողությամբ ընդհանուր պարապմունքը` սահմանված կարգով և ծրագրով, սովորողի համար լրացուցիչ կրթական ծրագիր է:

Ամսվա կտրվածքով դասավանդողներին ուղարկում է ընդհանուր պարապմունքի պատասխանատուների ցուցակը: Դասավանդողն իր խմբի սովորողների հետ լինում է տվյալ օրվա ընդհանուր պարապմունքի պատասխանատու:

24. Անգլերենը և ռուսերենը ամենօրյա ուսումնական պարապմունքներ են:

Դասացուցակին համաձայն 1-3–րդ դասարանի սովորողներն շաբաթական չորս անգամ ունեն օտար լեզվի պարապունքներ` յուրաքանչյուր օր քսանրոպե տևողությամբ: Առավոտյան ընդհանուր պարապմունքներին նս օտար լեզվի դասավանդողը ներկայացնում է համապատասխան լեզվով ուսուցողան երգեր:

25. «Ես և շրջակա աշխարհը» դասընթացը կազմված է «Ես և ինձ շրջապատող մարդիկ», «Անվտանգ երթևեկություն», «Մեր բակը», «Իմ քաղաքը», «Հայաստան», «Երկիր մոլորակ», «Տիեզերք», «Իմ խնամած բույսերը», «Իմ խնամած կենդանիները» ուսումնական նախագծերից:

Դասվարներն աշխատում են այս կետին համապատասխան:

26. «Երաժշտությունը» ներառում է խմբային երգ, պարերգ, պար, երաժշտության ունկնդրում, ռիթմիկա-շարժում, երաժշտական գործիքների հետծանոթացում, երաժշտական խաղեր, դասարանական երգչախումբ:

Շաբաթական մեկ անգամ երաժշտության ուսուցիչն է աշխատումսովորողների հետ, մեկ անգամ` դասվարը:

27. «Կերպարվեստ և տեխնոլոգիա» դասընթացը ներառում է «Նկարչություն», «Խեցեգործություն», «Աշխատանքային հմտություններ»: Իրականացվում են բացօթյա պլեներներ:

Դասվարներն աշխատում են այս կետին համապատասխան: Ուսումնականպարապմունքը կամակերպվու է դասարանում, տեխնոլոգիայի սրահում, բակում, այլ վայրերում:

28. Ֆիզկուլտուրան կազմակերպվում է ամենօրյա պարապմունքներով, որոնք ներառում են մարմնամարզական վարժություններ, շարժուն խաղեր, հեծանիվ: Առաջին դասարանցիները շաբաթական մեկ անգամ լողում են: Ծրագրի մաս են նաև բազմամարտի նախագծերը, քայլարշավները, բարձունքներ արշավելը, որոնց ընթացքում սովորողները ծանոթանում են անվտանգ գործունեության տարրերին:

1-ին, 2.1, 2.2 դասարանի սովորողները շաբաթական մեկ անգամ լողում են փակ լողավաանում, հեծանիվ վարել են սովորում, մարմնամարզական դահլիճում, ավազե հրապարակում անցկացնում են իրենց մարմնամարության պարապմունքները: 3-րդ դասարանի սվորողնեևը չեն լողում, մարմնամարզության պարապմունքներն անցկացնում են մարմնամարզական դահլիճում, ավազե հրապարակում:

29. Սովորողն իր ընտրությամբ շաբաթական 2 ժամ մասնակցում է «Երաժշտական գործունեություն», «Կերպարվեստ», «Մարմնամարզություն», «Մաթեմատիկաբանավոր» դասընթացներից մեկին:

1-3-րդ դասարաններում ունենք հետևյալ ընտրությամբ գործունեության խմբերը.

- Բանավոր մաթեմատիկա՝ 2 խումբ
- Մարմնամարզություն՝ 1 խումբ
- Երաժշտական գործունեություն՝ 1 խումբ
- Կերպարվեստ՝ 1 խումբ

30. Տնային ուսումնական աշխատանքը սովորողի և ծնողի համաձայնեցված ընտրությամբ լրացուցիչ աշխատանք է, ամենամսյա ֆլեշմոբներ:

1-3-րդ դասարանի սովորողները նոր երկարացված օրվա ճամբարին համապատասխան երկարացված օրվա ընթացքում իրականացնում են երկարացված օրվա կամակերպիչների նախագծերը: Տանը սովորողը կարող է ունենալ լրացուցիչ աշխատանք՝ ընտանեկան նախագծերի և ֆլեշմոբերի տեսքով:

31. Լրացուցիչ կրթությունը դաշնամուրի, ազգային նվագարանի, վոկալի, պարի, թատրոնի, կերպարվեստի, խեցեգործության-քանդակի, շախմատի, լողի, հեծանվի, մարմնամարզության, թեթև ատլետիկայի ուսումնական գործունեությունն է, երկարացված օրվա ծրագիրը, որոնց կազմակերպման համար սովորողի ծնողի հետ կնքվում է լրացուցիչ կրթության պայմանագիր՝ որպես ուսումնառության պայմանագրի հավելված: Սովորողը կարող է լրացուցիչ ուսուցման դասընթաց ստանալ նաև կրթահամալիրից դուրս, սահմանված կարգով:

Հարավային դպրոցի լրացուցի կրթության խմբերն են.

- Երկարացված օր՝ 97 սովորող
- Շախմատ՝ 6 սովորող
- Դաշնամուր՝ 7 սովորող
- Լող՝ 81 սովորող
- Կերպարվեստ՝ 5 սոորող

32. Ուսումնական պարապմունքները սահմանված կարգով ընդմիջվում են ուրախ մարմնամարզությամբ:

Դասվարի ղեկավարությամբ ընդմիջումներն անցնում են մարմնամարզության, երգի,պարի կամակերպման միջոցով:

33. Սահմանված կարգով իրականացվող ուսումնական ճամփորդությունները ուսումնական գործունեության բաղկացուցիչն են:

Դասվարները ամսական մեկ անգամ կամակերպու են ուսումնական, հայրենագիտական ճամփորդություններ: Դասարանի բոլոր սվորողների համար ճամփորդության մասնակցելը պարտադիր է:

34. Տնական շրջան Հայաստանից բացակայած, տարբեր պատճառներով ուսումնական ծրագիրը չյուրացրած սովորողի համար կրթական ծրագիրը սահմանված կարգով կարող է կազմակերպվել անհատական ուսումնական ծրագրերով:

Այդպիսի սովորողներ չունենք Հարավային դպրոցում:

35. Ուսումնական պլանի և ուսումնական ծրագրերի կատարողականն արտացոլվում է դպրոցի ղեկավարի, դասավանդողների և սովորողների ուսումնական բլոգներում և <u>սահմանված կարգով</u> ներկայացվող էլեկտրոնային հաշվետվություններում:

36. Սովորողի ուսումնական աշխատանքը գնահատանիշով չի գնահատվում: Հաշվի են առնվում սովորողի անհատապես և խմբով կատարած աշխատանքները, այդ թվում՝ սովորողի մասնակցությամբ ստեղծված և էլեկտրոնային ցանցերում տեղադրված նյութերի հղումները, գործունեության յուրաքանչյուր բնագավառից աշխատանքները էլեկտրոնային տարբերակով ներկայացվում են նրա կամ դասարանի, անհատական բլոգում (էջում): Սովորողի ստեղծած այլ տեսակի արդյունքները սահմանված կարգով ներկայացվում են

ցուցադրություններում, ցուցահանդեսներում, ստուգատեսներում, ստեղծագործական հավաքներում: Յուրաքանչյուր սովորողի համար, սահմանված կարգով լրացվում է զարգացման բնութագիր, որում ներկայացվում են սովորողի արժեքային համակարգը, նրա կողմից յուրացված գիտելիքների, կարողությունների, հմտությունների որակական բնութագիրը: Սովորողի ծնողը սահմանված կարգով մասնակցում է իր երեխայի բնութագրի, բլոգի վարման աշխատանքներին:

Ուսումնական աշխատանքի գնահատումը կատարվում է տվյալ կետի համաձայն: